

ՆՈՐՆՁՍԳՈՅՆ ԳԻՐՔԸ*)

Տաճկա-Հայաստանի բարենորոգութիւնների մասին.

(Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Ар-
меніи 26 ноября 1912 г.—10 мая 1914 года)

№ 14.

Ֆրանսիայի Ռուսական Դեսպանը գրում է Արտաքին
Գործոց նախարարին.

Փարիզ 28 փետրվ.—13 մարտի 1913 թ.

(Ն ա մ ա կ)

Այս քանի օրն ինձ այցելեց Չեզ յայտնի՝ Պօղոս Նուբար Փաշան և հաղորդեց ինձ հետևեալը. Պետրոգրադից նրան արուած խորհրդի համաձայն՝ մի քանի ժամանակ սորանից առաջ թողնելով Լոնդոն գնալու մտադրութիւնը՝ նպատակով որ այնտեղ Դեսպանների ժողովում յարուցանի հայկական բարենորոգումների հարցը, նա, Պօղոս Նուբար Փաշան, ներկայումս վերստին դիմում է մեզ խնդրով, յայտնելու, թէ արդեօք յարմար բոլէն չէ հասել յիշեցնելու պետութիւններին հայ ժողովրդի կարիքների մասին. այդ քայլը անելուն նրան դրդել է Տաճկաստանի և Բալկանեան թագաւորութունների մէջ լինելիք խաղաղութեան հաւանականութիւնը, որից յետոյ պէտք է առաջ գայ Փոքր Ասիայի դրութիւնը բարւոքելու հերթը: Պօղոս Նուբար Փաշան ինձ կրկնել է, տաճկահայերը բոլորովին չեն ցանկանում յարուցանել ինքնավարութեան հարցը կամ հպատակութիւնը փոխելու խնդիրը. նոքա նպատակ ունին իրականացնելու բարենորոգումների խնդիրը, որ նախատեսուած է Բերլինի գերագոյն ժողովով, մշակուած 1895 թ. Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից, բայց մինչև այժմ մնացած մեռած տառ. ըստ որում հայերը իրենց յոյսը դնում են Ռուսաստանի ու ժեղ պաշտպանութեան վրայ և հաստատապէս որոշել են բոլոր խնդիրներում ընթանալ Ռուսաց Կառավարութեան ցուցումներով. Պօղոս Նուբար Փաշայի Կ. Պօլսից ստացած տեղեկու-

*) Տես «Արարատ» 1915 թ. ապրիլ—մայիս էջ 547:

թիւններով ներկայ բռալէում հանգամանքները հայերի համար դասաւորում են բարեյաջող, որովհետեւ Տաճկաց Կառավարութիւնը, ըստ երևոյթին, սկսում է գիտակցել լուրջ բարենորոգումներ մտցնելու կարևորութիւնը, այդ բանն ընդունում են նաև Կ. Պօլսում պետութեանց ներկայացուցիչները, և մինչև անգամ Գերմանական Դեսպանը, որը մինչև այժմ ծայրայեղ թշնամութեամբ է վերաբերուել դէպի հայերի ձգտումները, ներկայումս սա փոխել է իւր յարաբերութիւնները դէպի հայերը, և մինչև անգամ արտայայտուել է յօգուտ յիշեալ բարենորոգութիւններին: Այդ բոլորից յետոյ Պօղոս Նուբար Փաշան վերջին շարաթները, մի քանի այլ հայ պատգամաւորների հետ, ձեռնարկել է մշակել բարենորոգութիւնների մանրամասն նախագիծը, հիմք ընդունելով 1895 թ. նախագիծը, որի մէջ մտցնում են մի քանի փոփոխութիւններ և լրացումներ, զիսաւորապէս ի նկատի առնելով եւրոպական կոնարտի բացարձակ անհրաժեշտութիւնը: Հէնց որ այդ նախագիծը վերջնականապէս կը պատրաստուի և քննութեան կենթարկուի էջմիածնի Կաթողիկոսի կողմից, Պօղոս Նուբար Փաշան ինձ կը դիմէ խնդրով այդ նախագիծն ենթարկելու Ռուսաց Կառավարութեան բարեհայեցողութեան:

Ես պատասխանեցի Պօղոս Նուբար Փաշային՝ որ չեմ գլանալ հաղորդել Ձեզ ի տեղեկութիւն բոլոր վերոյիշեալի մասին, և պէտք է սպասեմ բարենորոգութիւնների խոստացած նախագիծին. ես խընդրեցի նորան ապագայում ոչ մի քայլ չանել առանց Կայսերական Կառավարութեան համաձայնութեան և թոյլտուութեան, որը, ինչպէս նորան քաջ յայտնի է, ամենաջերմ մասնակցութեամբ է վերաբերում դէպի հայ ժողովրդի վիճակը և դէպի հայկական բարենորոգութիւնների հարցը. նորա հարցին՝ թէ կարող է արդեօք այն յայտարարութիւններով, որ ինձ գիմել է, դիմէ նաև Ֆրանսիական Արտաքին Գործոց Նախարարին, ես պատասխանեցի, որ այդ նկատմամբ ոչ մի արգելք չեմ գտնում:

Մի քանի օր անց՝ ինձ հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ, Պօղոս Նուբար Փաշան այցելել է պ. Ժոննարին, և թողել է նորա մօտ մանրամասն յայտարարութիւն. հայ ժողովրդի ցանկութիւնները կիր առնելով: Այդ առթիւ պ. Ժոննարն ինձ ասել է, որ նորա կարծիքով, հայկական բարենորոգութիւնների հարցը արժանի է ամենալուրջ ուշադրութեան, և որ, եթէ Պետութիւնները ցանկանում են Փոքր Ասիայում վտանգաւոր բարդութիւնների առաջն առնել, նորա անպատճառ պէտք է օգտուեն ներկայ հանգամանքներից, որպէսզի իրականացնեն Բերլինի միջազգային դաշնագրութեամբ եղած որոշումները և 1895 թ. նախատեսածները:

(Ստորագ.) ԵՂՎԱԼՍԿԻ

№ 15.

Տաճկաստանի Ռուսաց Դեսպանը հեռագրում է
Արտաքին Կործոց Նախարարին.

Կ. Պոլիս 11 մարտի 1913 թ.

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի և Տաճկա-Հայաստանի թեմական Առաջնորդների հաղորդածները քրդերի կողմից կատարուած բռնութիւնները հայերի վրայ, դժբախտաբար, համաձայն են իրականութեան հետ: Ծշմարիտ է, ինձ մօտ եղած գանգատներից և հաղորդագրութիւններից ևս գալիս եմ այն համոզման, որ այդ բռնութիւնները առ այժմ չեն դուրս գալիս սովորական երևոյթների շրջանակից արևելեան Տաճկաստանի վիլայէթներում և չեն կրում կրքերի բռնկման և հայերի սխտեմատիկ կոտորածի բնուորութիւն:

Այդ չափազանց յարաբերական լութիւնը կարելի է բացատրել, որ ունեցել է նշանակութիւն Չերդ Բարձր Գերազանցութեան տուած խորհուրդները թուրխան փաշային և իմ գիմումները Բ. Դրան, ինչպէս և սաստիկ ձմեռը: Բայց կասկած չկայ, որ ամեն ժամանակ դրութիւնը կարող է սրուել վերստին, և որ այդ լարուած դրութեան առաջն առնելու համար պէտք է շուտափոյթ լուրջ միջոցների գիմել և իրականացնել Տաճկա-Հայաստանում բարենորոգութիւնները:

Սակայն ներկայ Տաճկաստանի կառավարութիւնից, ըստ երևոյթին, չէ կարելի սպասել ներկայ ժամանակում լուրջ ձեռնարկութիւն այդ գործում: Նոր երիտասարդ թուրքերի խորհրդարանը բոլորովին ձգել է մի կողմը Քեամիլ փաշայի Նախարարութեան նախագիծը, որ 17 դեկտեմբերի 1912 թ. հեռագրի հետ ուղարկել եմ Չերդ Բարձր Գերազանցութեան, և, ինչպէս յայտնի է ինձ հաստատուն աղբիւրներից, չէ վարում բանակցութիւններ բարենորոգութիւնների մասին ոչ Հայոց Պատրիարքի հետ, ոչ առհասարակ հայերի հետ: Ըստ երևոյթին, երիտասարդ տաճիկների կառավարութիւնը վճռել է իրեն տհաճ հայկական բարենորոգութիւններից խուսափելու համար գիմել շատ անգամ Դրան կողմից փորձուած միջոցի—ամբողջ կայսրութեան համար բարենորոգութիւններ մտցնելու մասին ամեն տեղ հրատարակել: Այդ նպատակով կառավարութիւնը կամենում է օգտուել վիլայէթների կառավարութեան մասին կազմուած օրէնսդրով, որ մշակել է

պարլամենտական յանձնաժողովը 1911—1912 թ. մասնաժողովում, որի երկրորդ մասը անցեալ տարուայ ապրիլ ամսում հաստատուել է Սուլթանի կողմից—սահմանադրութեան 36-րդ յօդուածի զօրութեամբ, բայց մինչև այժմ գործնական ձևակերպումն չէ ստացել: Տեղական Կառավարութեան բարենորոգութիւնների հարցը մօտիկ անցեալում վալիներից և մուաէսարիֆներից կազմուած յանձնաժողովում քննուած էր, ինչպէս ես իմացայ գաղտնի աղբիւրներից, այդ յանձնաժողովը, որ ոյժ է ստանում Ներքին Գործոց Նախարար Հաջի Ադիլ Բէյից, արտայայտուել է յօդուած գեներալ Նահանգապետների (վալիներ) լիազօրութիւնն ընդարձակելու, այինքն յօդուած վարչական ապակենտրոնացման. յանձնաժողովի առաջարկութիւնները քննութեան է ենթարկուած ներկայումս Նախարարների Խորհրդի կողմից:

Ժանդարմերիայի բարենորոգութիւնները, որի մասին յիշեցնում է «Jeune Turc» 23 փետրվարի ս. տ. լրագիրը, քննութեան է ենթարկուել նահանգապետների յանձնաժողովի կողմից և հաստատուած է նախարարների խորհրդի կողմից: Այդ բարենորոգութիւնով Տաճկաստանը բաժանուած է հինգ սեկտորների, որոնք ենթակայ են առանձին վերատեսչական յանձնաժողովների, որի մէջ մտնում են տաճկաց ծառայութեան մէջ ընդունուած օտարազգիներ, ըստ որում Հայկական նահանգները մտնում են Տրապիզոնի սեկտորութեան շրջանը: Բացի այդ յատուկ յանձնաժողովներից, գաւառներն ուղարկուած է Գեներալ Բաուժանի նախագահութեան ներքոյ ժանդարմերիայի գլխաւոր վերատեսուչը:

Մի քանի օր սորանից առաջ ես ստացայ այլ ցուցումն «Ընդհանուր բարենորոգութիւններն» առաջ գալու մասին: Ֆրանսիական հպատակ Օստրօօզ Կոմսը, որ երկու տարուայ ընթացքում (1909—1911 թ.) եղել է Արդարադատութեան Նախարարի խորհրդականը և որ հրաժարական է աուել ի նկատի առնելով որ հնարաւոր չէ իւր կողմից առաջարկած բարենորոգութիւնները անցկացնել, ստացել է իրրե թէ առաջարկութիւն, Տաճկաց Կառավարութեան կողմից, ընդունել ամբողջ Օսմանեան Պետութեան Դատական Վերատեսչի նոր պաշտօնը: Վերջապէս ինձ հաղորդում են, որ հրամանագրուած է նախկին Մեծ Վեզիր Հակկի փաշային համոզել Անգլիական Կառավարութեան Հայաստանում բարենորոգութիւններ մտցնելու անցանկալիութեան վերաբերմամբ, գերագասելով ամբողջ Պետութեան մէջ մտցնել ընդհանուր բարենորոգութիւններ:

(Ստորագ.) ԳԻՐՍ:

№ 16.

Գերմանիայի Ռուսաց Գեապանը Արտաքին Գործոց
Նախարարին.

Բեռլին 15/28 մարտի 1913 թ.

(Հ ե ո ա գ ի ր)

Հայկական գաղութը Բեռլինում բաւական աչքի ընկնող է և իւրաքանչիւր տարի կազմակերպում է բարեգործական նպատակով համերգ, որտեղ լինում են նաև հայերին հետաքրքրող հարցերի շուրջը զեկուցումներ: Այս տարի այդ համագումարն էր աւելի պակաս թուով, որ բացատրւում է, ըստ երևոյթին, Հայկական գաղութի պակասելով, մանաւանդ ուսանողների կովկասից եկած, որոնք իբր թէ վերադարձել են հայրենիք, հայերի դէպի Ռուսաստանն ունեցած յարաբերութեան փոփոխութեան պատճառով:

Երեկոյթի ծրագրի մէջ, նախկին տարիների պէս, մտել է նաև զեկուցումն Հայաստանի մասին: Այդ զեկուցումն կարգացող դոկտոր Լեպսիուսը, յայտնի Եգիպտաբանի որդին, վաղուց զբաղւում է Հայկական հարցով և հաշւում է Փոքր Ասիային և Պարսկաստանին լաւատեղեակ անձն, որտեղեք ինքը մի քանի անգամ ճանապարհորդել է:

Նորա նախաձեռնութեամբ հիմնուած է Բեռլինում 1896 թ. (Հայկական կոտորածից յետոյ) ընկերութիւն, որ կոչւում է Deutsche Orient Mission, որ պէտք է աշխատէր կուլտուրական լուսաւորութեան և մարդասիրական գործի նպատակակէտ ընդունելով: Այդ ընկերութեան միջոցներով, որ իբր արդէն ծախսել է 10 ից մինչև 12,000,000 մարկ, հիմնուած և պահպանւում են Փոքր Ասիայում և Պարսկաստանում բողոքական դպրոցներ:

Իրեն, դոկտոր Լեպսիուսի խօսքերով, իւր հիմնած ընկերութիւնը, որ բացարձակ կերպով թշնամարար էր վերաբերւում դէպի Արդուլ-Համիդի բեժիմը, իւր գոյութեան սկզբում հանդիպեց Գերմանական կառավարութեան կողմից լիակատար անհամակրանքի: Վերջին ժամանակները Գերմանական իշխանութեանց յարաբերութիւնը դէպի նա բոլորովին փոխուեց, և Deutsche Orient Mission-ը ոչ միայն չէ հանդիպում իւր գործառնութեանց մէջ դժուարութիւնների կառավարչական օրգանների կողմից, այլ ընդհակառակը, աւելի շուտ ամեն մի բարոյական, և մինչև անգամ գուցէ և նիւթական օգնութիւն է տեսնում. նա, ըստ երևոյ-

թին, ստանում է այժմ նոյնպէս ցուցումներ Արտաքին Գործոց վարչութեան կողմից:

Հաւանական է, որ այդ ընկերութիւնն իւր եռանդուն գործունէութիւնը կառարում է Հայաստանի մէջ, որտեղ նա անկասկած գտնում է աջակցութիւն Գերմանիայի հիւպատոսական ներկայացուցիչների կողմից: Մինչդեռ, որքան հնարաւոր եղաւ ինձ իմանալ, չէ երևում առանձին հետաքրքրութիւն դէպի Հայկական հարցը ոչ մամուլում և ոչ էլ վաճառականական-արդիւնաբերական շրջաններում Գերմանիայի: Սորանից հարկաւ չպէտք է եզրակացնել, որ այստեղ դէպի Հայաստանի վիճակը վերաբերում են անտարբեր Գերմանիան, չունենալով ուղղակի քաղաքական շահեր Ասիայի այդ մասում, չէ ձեռք բերել այնտեղ տնտեսական շահեր և անկասկած յոյս ունի զարգացնելու նոցա: Այդ տեսակէտից այստեղ շատ նախանձով են վերաբերում դէպի ամեն մի քայլը՝ արուած մեր կողմից Տաճկաստանի այդ մասում, որով և բացատրւում է այն աղմուկը, որ մամուլը բարձրացրեց, երբ առաջ եկաւ այն ձայնը, որ մենք մտադիր ենք ստիպել Իրան համաձայնուելու խաղաղ ճանապարհով մեր զօրքերը մտցնելու Կովկասի սահմաններին կից տաճկական վիլայէթները:

(Ստորագր.) ՍՎԵՐԲԷԷՎ:

№ 17

Բիթլիսի Ռուսական հիւպատոսը և Պոլսի Ռուսական Դեսպանին.

Բիթլիս 31 մարտի 1913 թ.

(Հ ե ո ա դ ի ր)

Այս շարաթ գիշեր քիւրդ Մուկտադին մահացու կերպով վիրաւորեցին, որին տանելով տեղական կարակօլը՝ վախճանուեց: Միւս առաւօտեան քրդերը նորա մարմինը բերին Հուկումէտ և բղաւելով տարածում էին՝ որ սպանութիւն գործողը հայ է եղել և պահանջում էին նորան կախել, սպանում էին հայերի կոտորած սարքել և վախեցնում էին իշխանութիւններին: Ոստիկանութիւնը բանտարկել է 7 հայ՝ նրանց կասկածելով սպանութեան մէջ: Գրգռուած քրդերը վիրաւորել են Կոմսի տան սահմանում չորս հայ, բայց այդ քրդերից ոչ ոք էլ չէ բռնուած: Հայերի մէջ կայ կոտորածի երկիւղ: Բիթլիսում կայ միայն 120 տաճկական զինուոր, որոնք անզօր կը լինին անկարգութեան դէպքում:

(Ստորագր.) ՇԻՐԿՈՎ:

18.

Էրզրումի Ռուսաց Հիւպատոսը Կ. Պօլսի Ռուսաց
Դեսպանին.

Էրզրում 6—19 ապրիլի 1913 թ.

(Հ ե ո ա գ ի ր)

Ռեզիւանում, Միդիատում, Ճեզերում և Հասանկէֆում—Տիգրիսի եզերքում քրդերը ապստամբել են Բեդր-Սան-Բէկի որդու հովանաւորութեան ներքոյ. յիշեալ տեղերի ամեն մի հաղորդակցութիւն Դիարբեքիի հետ կտրուած է: Ապստամբները կողոստել են Յակոբեան միաբանութեան Դար-Մախօր վանքը, Դաֆնէում գտնուած եկեղեցին և հայոց եկեղեցին Հասանկէֆում: Մարդենի Մութէսարիֆը ապստամբների դէմն է դուրս եկել:

(Ստորագր.) ԱԴԱՄՈՎ:

19.

Տաճկաստանի Ռուսական Դեսպանը Արտաքին Գործոց
Նախարարին.

Կ. Պօլս 7 ապրիլի 1913 թ.

(Հ ե ո ա գ ի ր)

Վերջին ժամանակներս այստեղ Հայոց Պատրիարքը և հայ հասարակութիւնը սաստիկ յուզուած են այն տեղեկութիւններով, որ ստացուած են Բիթլիսից, Երզնկայից և Հաջինից այնտեղ սլատահած դէպքերի մասին, որոնք իրենց հետեանքներով կարող են վտանգ սպառնալ տեղական հայ ազգարնակութեան:

Ինչպէս յայտնի է Չերդ Բարձր Գերագանցութեան իմ Չեզ ուղղած Բիթլիսի մեր Հիւպատոսի 31-ն մարտի գաղտնի հեռագրից, այդ քաղաքում անկարգութիւնները սկսուել են մի քրդի սպանման առթիւ, որպիսի սպանութեան մէջ նորա համացեղակիցները չէին դանդաղել մեղադրելու հայերին: Իմ Մեծ վեզիրի հետ ունեցած տեսակցութեան ժամանակ, ես նորա ամենալուրջ ուշադրութիւնն եմ դարձրել այդ դէպքի վրայ և ցանկալի համարել միջոցների դիմել նախազգուշացնելու հայերին առանց պատճառի մեղադրելու և զրգռելու նրանց դէմ տեղական մահմեդական բնակչութիւնը:

Հետևեալ օրը տեղական մամուլում լոյս տեսաւ Օտոմանեան Մամուլի Բիւրոյի հաղորդագրութիւնը, որի մէջ Բիթլիսում սլա-

տաճած դէպքերը բացատրում են իբր թէ հայերի սպանութիւնը իրենց հայերի ձեռքով: Գորա համար Ներքին Գործոց Նախարարը առաջադրում է Բիթլիսի վայրին ըստ հնարաւորութեան կատարել գործի հանգամանքների ամբողջ քննութիւնը, մեղաւորներին յանձնել դատաստանի և ձեռք առնել բոլոր միջոցները կարգը վերականգնելու համար:

5 Ապրիլի տեղական լրագիրներում լոյս տեսաւ նոր Կառավարչական հաղորդագրութիւն Երզնկայում պատահած բոմբի պայթելու մասին, և զանազան պայթուցիկ նիւթերի ամբողջ պաշարի մասին՝ ինչպէս բոմբ և այլն, որոնք հետախուզութեան ժամանակ գտել են հայերին պատկանեալ տներում:

Պաշտօնական օրգան «Թանին»ը մատնանշում է, որ այդ պայթումն չէ ներկայացնում իբրև հակահառավարչական գործողութիւն, այլ միայն պատահական երևոյթ: Սակայն, աւելացնում է լրագիրը, պէտք է ուշադրութիւն դարձնել այն վերքի վրայ, որով բռնուած է արևելեան Անատոլիան: Պէտք է յուսալ, որ Կառավարութիւնը, բարենորոգութիւնների ճանապարհի վրայ կանգնելով, կարող է ազգաբնակչութեան երկու մասերի մէջ վերականգնել փոխադարձ հաւատ և դորանով առաջն առնի բոմբերի պատրաստութեան:

Այդպիսի խաղաղասիրական հոգով խօսել է Ներքին Գործոց Նախարարը Հայոց Պատրիարքի հետ, երբ վերջինս այցելել է նրան, ինչպէս ինձ յայտնում են գաղտնի աղբիւրից: Հաջի Աղիւլ հաւաստիացրել է Պատրիարքին, որ Երզնկանում ոչ մի անկարգութիւն չէ ծագել, որ վերևում յիշատակուած նման դէպքեր կարող են պատահել ամենուրեք և որ նրանց պատճառով ամբողջ ազգը մեղադրել Կառավարութիւնը չէ կարող ոչ մի կերպ:

Վերջապէս, Հայոց Պատրիարքի ստացած տեղեկութեան առթիւ, տպագրուած տեղական Հայոց թերթերում, որով հաղորդում են, թէ Հաջինում երկու ժանդարմերիա է յարձակուել հայ կանանց վրայ և այն խոտովութեանց մասին, որ տիրում էր տեղական քրիստոնեայ ազգաբնակչութեան մէջ ժանդարմների նրանց վրայ արած յարձակման առթիւ՝ Կառավարութիւնը նոյնպէս յարմար չէ համարել լռութեան տալ: Ընդհանրապէս մեղաւոր Հաջինի պիտաւոր ենթասպային, որ գինովցած վիճակում յարձակուել է կնոջ վրայ և վիրաւորել է կնոջ պաշտպանութեան համար եկողին, նոյնպէս և նրան ուղեկցող զինուորներին, որոնք ազգաբնակչութիւնը գրգռել են այդ առթիւ՝ Ներքին Գործոց Նախարարը պատուիրել է մեղաւորներին դատի յանձնել և ենթարկել նրանց խիստ պատժի:

Ոչ մի կասկած չէ մնում, որ Փոքր Ասիայի մահմեդական և քրիստոնեայ ազգաբնակչութեան մէջ տիրում է վերջին ծայր սուր

յարարերութիւն և բաւական է ամենաչնչին դէպքը, որպէսզի առաջ գայ բոնկումն:

(Ստորագր.) ԳԻՐՍ

№ 20.

Տաճկաստանի Ռուսական Դեսպանը Արտաքին Գործոց Նախարարին.

Կ. Պոլիս 23 ապրիլի 1913 թ.

(Հ ե ս ա ղ ի ր)

Հայկական Խառն Խորհուրդը յայտնել է Ազգային Ժողովին, որ ստիպուած է հրաժարական տալ, ի նկատի առնելով, որ գաւառներում դրութիւնը վատացել է և հնարաւոր է մահմեդական մոլեռանդութեան ժայթքումն և միւս կողմից էլ որ Ներքին Գործոց Նախարարը մերժել է ընդունել Հայոց Պատրիարքարանի պատգամաւորութիւնը: Ազգային Ժողովը չէ ընդունել Խառն Խորհրդի հրաժարականը, արտայայտել է նրան վստահութիւն, բայց ի նկատի առնելով րոպէի կարևորութիւնը նրան միացրել է մի այլ Յանձնաժողով, բաղկացած իւր զանազան անդամներից:

(Ստորագր.) ԳԻՐՍ.

№ 21.

Բիթլիսի Ռուսական հիւպատոսը Կ. Պոլսի Ռուսաց Դեսպանին.

Բիթլիս 1 մայիսի 1913 թ.

(Հ ե ս ա ղ ի ր)

Քրդերը անպատիժ սպանում և կողոպտում են հայերին: Երկու հայ սպանուած են Դիարբեքիւրի վիլայէթի Սլիվանի շրջանում: Մուշում վախճանուել է հարկաժողով հայ Խոսրովը քրդերից ստացած վէրքից: Սամսոնում սպանուած է մի հայ, Խորզանի շրջանում Չաւո Ռեշար քրդի ձեռքով սպանուած է Սիրեակ: Ապա հիւպատոսը բերում է հայերի սպանութիւնների մի շարք դէպքեր, որ զանազան տեղերում կատարուել են քրդերի ձեռքով: Վերջում աւելացնում է՝ որ այդ բոլորի դիմաց Տաճիկ Կառավարութիւնը անգոր է վերականգնելու կարգը:

№ 22

Տաճկաստանի Ռուսական դեսպանը Արտաքին գործոց
Նախարարին:

Կ. Պոլիս 6 Մայիսի 1913 թ.

Դեսպան Գիրսը հեռագրում է Արտաքին Գործոց Նախարարին և յայտնում, թէ իւր 23 ապրիլի հեռագրով հաղորդել է արդէն, որ Աղգային ժողովը չէ ընդունել խառն խորհրդի հրաժարականը, այլ ընդհակառակը վստահութիւն է յայտնել և աւելացրել 5 հոգուց բաղկացած մի Յանձնաժողով միասին գործելու, որոնք և շեն զլացել կազմել մի յայտագիր հայկական գաւառների դրութեան ճասին և որը Մեծ Վեզիրին ներկայացել է առանձին պատգամաւորութիւն, բաղկացած Պատրիարքից, երկու եպիսկոպոսից, խառն խորհրդի Նախագահից և փոխ-Նախագահից:

Պատրիարքարանի այդ յայտագիրը հրաւիրում է Օտոմանեան կառավարութեան ուշադրութիւնը ապագայ արդէտալի դէպքերի նշանների վրայ, որոնք պէտք է լինեն աւելի սարսափելի քան մինչև այժմ եղածները: Մահմեդական տարրի մէջ տարածում է համոզմունք, որ իբր թէ քրիստոնեաներն են պատճառ այն բոլոր դժբախտութիւնների, որոնք վերջին ժամանակներս առաջ են եկել ամբողջ կայսրութեան մէջ: Դեսպանը հաղորդում է որ եղած սպանութիւնները, աւազակութիւնները, բռնի մահմեդական դարձնելը վերջին ժամանակներս ոչ միայն չէ արգելում կառավարութեան կողմից, այլ ընդհակառակը շարագործները վարձատրւում են: Պատրիարքարանը այդ առթիւ բերում է փաստերի մի ամբողջ շարք: Վանում տանջում են բանտերում մինչև 150 հայ, իբրև թէ մահմեդականի սպանելու պատճառով, մինչ ղեռ հայ քահանայի և հայ ուսուցչի սպանող մահմեդականները անպատիժ են մնացել և արդարացել: Վերջում յայտագիրը մատնանշում է այն հանգամանքը, որ կառավարութիւնը հայոց հողերում բնակեցնում է տաճիկ գաղթականներ (մուհաճիրներ):

Յայտագիրը առանձնատէս երևան է հանում տաճիկ դատաւորների և աստիճանաւորների իսկական պատկերը, որ նորա, թիբրև հին բէժիմի մարդիկ, անկարող են հասկանալ ժամանակի պահանջները և պետութեան իսկական շահերը: Այդ յայտագրով Պատրիարքարանը պահանջում է առանձին հրահանգութեան հրատարակութիւն, որով հաստատուի պաշտօնական անձանց անձնական պատասխանատուութիւնը իրենց բոլոր հակաօրինական գործողութեանց համար:

Ապա դեսպանը ասում է, թէ չափազանց նշանակալից է այն հանգամանքը, որ յայտագիրը սահմանափակում է միայն հայերի ծանր կացութիւնը պատկերացնելով, բայց ոչ մի խօսք չէ յիշատակում բարենորոգութիւնների մասին: Դեսպանի զաղտնի տեղեկութիւններից պարզւում է, որ Մեծ Վեզիրը շատ անհանգիստ է լինում այդ մասին, և այդ հանգամանքը բացատրում է նա նրանով, որ հայերն ըստ երևոյթին բարենորոգութիւնների մասին սպասում են Եւրոպայից լուրջ կարգադրութիւնների, հետևապէս և աւելորդ են համարում այդ խնդրի մասին խօսել Դրան հետ: Մինչև անգամ Մահմուտ Շէֆկէտ փաշան ուկնդրելով պատգամաւորութեան, ինքը խօսք է բաց անում Բարենորոգութիւնների մասին, բայց պատգամաւորութիւնը յայտնում է, որ իրենք լիազօրուած չեն այդ հարցի մասին խօսելու:

Ինչ վերաբերում է բողոքներին՝ Մեծ Վեզիրն ընդունում է հիմնաւոր որոշ չափով: Չէ ժխտում նա, որ հայկական որոշ գաւառներում գոյութիւն ունի խռովութիւն, և յայտնում է, որ կառավարութիւնը հաստատապէս որոշել է վերջ դնել հայերի ներկայ կացութեան: Մեծ Վեզիրը խոստանում է նաև յետ կանչել անարժան ծառայողներին և նշանակել աւելի արժանաւոր և ընդունակ վարչական անձանց: Մեծ Վեզիրը հերքելով այն զրպարտութիւնները, որ տարածել են հայերի մասին, ամենաջերմ կերպով զովարանել է հերոսութիւնը և անձնուէր ծառայութիւնը հայերի, որոնք ցոյց են տուել պատերազմի ժամանակ:

Դորանից յետոյ դեսպանը տեղեկացնում է, որ հայկական Ազգային նոր ժողով է կայացել, որտեղ Պատրիարքը ընդարձակ կերպով խօսել է, հրաւիրելով ժողովի ուշադրութիւնը հայերի անտանելի կացութեան և կառավարութեան անգործունէութեան վրայ, չնայած, որ հոկտեմբեր ամսից սկսած 176 թագրիք է նրան տրքուած, կառավարութիւնը չէ պատժում մեղաւորներին և չէ վերադարձնում հայերից խլուած հողերը տէրերին: Ժողովում Պատրիարքը նկատում է նաև, թէ ինչ վերաբերում են կառավարչական բարենորոգութիւնների ծրագրին և հայկական գաւառները Յանձնաժողով ուղարկելու խնդրին՝ ինքը վերաբերում է յոռետեսութեամբ և յայտնում է ժողովին, որ իրենք պէտք է այդ բոլորի համար պահանջեն կառավարութիւնից իրական ապահովութիւն:

Բ. Վ. Ա.

(Շարունակելի)

